Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կրթական հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. մշակել և վարչության պետի հաստատմանը ներկայացնել հանրային իրազեկման արշավների իրականացման տարեկան ծրագրերը՝ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս անձանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, ազդարարման համակարգի առանձնահատկությունների, տեղեկատվության ազատության երաշխիքների, հանրային ծառայողների էթիկայի կանոնների վերաբերյալ հանրության և հանրային ծառայողների տեղեկացվածության բարձրացման համար,
2. հետևել հանրային իրազեկման արշավների կատարման ընթացքին, համակարգել տարեկան ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների իրականացմանը,
3. իրականացնել օրական երկանգամյա պարբերականությամբ էլեկտրոնային մամուլի մշտատադիտարկում (առնվազն 15 ԶԼՄ), ամփոփ տեղեկանքի պատրաստում,
4. cpcarmenia.am կայքի ընթացիկ և նախկին նյութերի անգլերեն թարգմանություն,
5. կայքում հրապարակվող Հանձնաժողովի որոշումների անգլերեն թարգմանություն,
6. Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջի զարգացում,
7. Հանձնաժողովի գործունեության ոլորտներին առնչվող թեմատիկաների, ընթացիկ միջոցառումների վերաբերյալ հաղորդագրությունների նախապատրաստում / իրականացնել թեմատիկ հետազոտություններ, ուսումնասիրություններ, վերլուծություններ/,
8. Հանձնաժողովի տելեգրամյան օգտահաշվի բացում և ընթացիկ վարում,
9. աջակցել Հանձնաժողովի նախագահի և կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի իրականացման և մոնիթորինգի վարչության պետի՝ վարչության գործառույթներին առնչվող այլ ընթացիկ հարցերում:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մինչև մեկ տարի:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 267 072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.

3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն՝ միջազգային հարաբերություններ կամ քաղաքագիտություն կամ լրագրություն մասնագիտությամբ.
2) Լրագրության կամ հասարակայնության իրազեկման կամ հասարակայնության հետ կապերի կամ մամուլի հետ կապերի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) Անգլերեն լեզվի ազատ տիրապետում.
4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով (**դիմումի ձևը կցվում է**).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (**հայտարարության ձևը կցվում է**):

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով կամ անձամբ առձեռն:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 17 մարտի 2023թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 13.00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
հեռ.՝ 012-77-77-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr.cpcarmenia@gmail.com